# Բաց դասի պլան

Առարկան - <<Տեխնոլոգիա>>

Դասարանը - V

Դասավանդող –Եղիազարյան Մ.

Դասի տիպը - համակցված

Դասի տևողությունը – 45 րոպե

Թեման – <<Դետալների վերջնամշակում և հավաքում>>

Դասի նպատակը և խնդիրները:

Դասի նպատակը –Աշակերտներին ծանոթացնել ինչ է վերջնամշակումը,ինչ գործիքներով են կատարում փայտանյութի մաքրում, սովորեցնել դետաների միացման համար մեխերի և պարուրակների ճիշտ ընտրությունը,միացման աշխատանքներ կատարելու հնարները՝ սոսնձման գործընթացը:

Խնդիրները.

Ուսուցանող – Հաղորդել գիտելիքներ վերջնամշակման ,դետալների միացման ձևերի մասին,սոսնձման գործընթացի վերաբերյալ:

Զարգացնող

Զարգացնել ստեղծագործական մոտեցումներով հանդես գալու կարողությունները,վերջնամշակման և սոսնձման կարողություններ

Դաստիարակող

- Աշակերտների մոտ զարգացնել մյուսներին օգնելու համագործակցելու ունակությունները ,կարգապահության դրսևորումը խմբում:Անվտանգ աշխատելու կանոներ:
- Ձեռք բերի պատասխանատվության զգացում ստացած գիտելիքների և կարողությունների կիրառման նկատմամբ:

Դասի կահավորումը

Անհրաժեշտ նյութեր – Դասագիրք, տետր, փայտանյութ,հղկաթուղթ, սոսինձ ,կտոր ,պտուտակ,պտուտակահան:

Ցուցադրման նյութեր – սահիկ,տեսանյութ
Մեթոդները -- Մտագրոհ, խմբային աշխատանք, դիտում, «քառաբաժան»:

Դասի ընթացքը

Նախորդ նյութի ամփոփում –հարցերի միջոցով ՝ կիրառելով ***Wordvall*** ծրագիրը:

1. Ի՞նչ է շաղափը
2. · Շաղափի ի՞նչ տեսակներ գիտեք
3. Շաղափման ի՞նչ եղանակներ գիտեք
4. · Ինչ գործիքներ և հարմարանքներ են օգտագործում շաղափելիս
5. Ի՞նչպե՞ս է կատարվում շաղափման գործընթացը
6. · Թվեք անվտանգ աշխատելու կանոնները



Խթանում

Մտագրոհի միջոցով պարզել աշակերտների գիտելիքները վերջնամշակման վերաբերյալ:

Իմաստի ընկալում

Սահիկի միջոցով ցույց տալ և բացատրել ինչ է վերջնամշակումը,ինչ գործիքներով են կատարում փայտանյութի մաքրում, դետաների միացման համար մեխերի և պարուրակների ճիշտ ընտրություն,միացման աշխատանքներ կատարելու հնարները՝ սոսնձման գործընթացը:

Գործնական աշխատանք (խմբային աշխատանք)

Դասարանը բաժանել 5 խմբի՝ 2 հոգանոց:

Հանձնարարել կատարել տարբեր դետալների վերջնամշակում, սոսնձում,պտուտակով դետալի միացում:





.







.




.

.

Կշռադատում

<<Քառաբաժան>> մեթոդի միջոցով պարզել սովորողների զգացողությունները, ինչպես նաև նյութի ընկալման աստիճանը.կիրառելով ***Wordvall*** ծրագիրը:




Գնահատում և տնային:

Դասանյութի վերաբերյալ տեսանյութեր:

https://www.youtube.com/watch?v=sqkn9gT5Iwo
https://www.youtube.com/watch?v=8vpN2OUqPF0